



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

### ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 դեկտեմբերի, 2020 թվականի № 52-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ  
ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ  
ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 6-Ի N  
50-Լ ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով և 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը և Հանրային հեռարձակողի խորհրդի կանոնադրության 10-րդ կետի 5-րդ ենթակետը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար Հանրային հեռարձակողի գործադիր տնօրենի թափուր տեղը համալրելու մրցույթի թափանցիկ, հավասար և արդար պայմանների ապահովման անհրաժեշտությունը՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո Ր Ո Շ ՈՒ Մ է.

1. Հաստատել Հանրային հեռարձակողի գործադիր տնօրենի թափուր տեղի համալրման համար մրցույթի անցկացման կարգը՝ համաձայն սույն որոշման հավելված 1-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2010 թվականի սեպտեմբերի 6-ի N 50-Լ որոշումը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. Շիրինյան

29 դեկտեմբեր, 2020 թվականի

ք. Երևան

Հավելված 1  
Հանրային հեռարձակողի խորհրդի  
29 դեկտեմբեր, 2020թ. N 52-Լ որոշման

Հաստատում եմ  
Հանրային հեռարձակողի  
խորհրդի նախագահ  
\_\_\_\_\_ Ա. Շիրինյան  
29 դեկտեմբեր, 2020թ.

## ԿԱՐԳ

### ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հանրային հեռարձակողի գործադիր տնօրենի թափուր տեղի համալրման համար մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) անցկացման հետ կապված հարաբերությունները:
2. Մրցույթով ապահովվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար Հանրային հեռարձակողի գործադիր տնօրենի թափուր տեղը համալրելու հավասար մատչելիությունը՝ իրենց մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին համապատասխան, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրույթունից:
3. Հանրային հեռարձակողի գործադիր տնօրենի թափուր տեղի համալրման մրցույթն անցկացնելու նպատակով Հանրային հեռարձակողի խորհուրդը ձևավորում է ժամանակավոր մրցութային հանձնաժողով (այսուհետ՝ Մրցութային հանձնաժողով):
4. Մրցութային հանձնաժողովը բաղկացած է հինգ անդամից, ներառյալ՝ նախագահը, որին առաջին նիստի ժամանակ բաց քվեարկությամբ ընտրում են Մրցութային հանձնաժողովի անդամները:
5. Մրցութային հանձնաժողովի նախագահը և անդամները պաշտոնավարում են մինչև Հանրային հեռարձակողի գործադիր տնօրենի թափուր տեղի համալրումը:
6. Մրցութային հանձնաժողովի անդամի թեկնածու կարող է լինել ցանկացած անձ, ով ունի համապատասխան կարողություններ գնահատելու անձի աշխատանքի կազմակերպման և ղեկավարման հմտությունները:
7. Մրցութային հանձնաժողովն իր աշխատանքներն իրականացնում է Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Ալեք Մանուկյան 5 հասցեում:
8. Մրցութային հանձնաժողովի կազմում ընդգրկվելու համար Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահը նիստի ընթացքում առաջադրում է սույն կարգի պահանջները բավարարող Մրցութային հանձնաժողովի անդամի թեկնածուներ:

9. Հանրային հեռարձակողի խորհրդի անդամները բաց քվեարկության (քվեարկությունը իրականացվում է յուրաքանչյուր թեկնածուի համար առանձին) միջոցով՝ խորհրդի նիստին ներկա խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընտրում են Մրցութային հանձնաժողովի անդամներ:
10. Մրցութային հանձնաժողովի անհատական կազմը հաստատվում է Հանրային հեռարձակողի խորհրդի որոշմամբ:
11. Եթե մրցույթի ընթացքում կամ մրցույթից ոչ ուշ, քան 72 ժամ առաջ Մրցութային հանձնաժողովի որևէ անդամի մասնակցությունը դրա հետագա աշխատանքներին դառնում է անհնար, ապա մրցութային հանձնաժողովի կազմը չի համալրվում, իսկ մրցութային հանձնաժողովը համարվում է կազմված դրա հետագա աշխատանքներին փաստացի մասնակցելու հնարավորություն ունեցող անդամներից: Սույն կետով նշված ժամկետից շուտ Մրցութային հանձնաժողովի որևէ անդամի մասնակցությունը դրա հետագա աշխատանքներին անհնար դառնալու դեպքում Մրցութային հանձնաժողովի կազմը համալրվում է սույն կարգով սահմանված ընդհանուր հիմունքներով:
12. Մրցութային հանձնաժողովի ընթացիկ գործունեությունն սպասարկում է Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմը:
13. Մրցութային հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով:
14. Մրցութային հանձնաժողովի նիստերը կարող են անցկացվել նաև առանց օրակարգի հարցերի քննարկման և քվեարկության դրված հարցերի վերաբերյալ որոշումների ընդունման նպատակով Մրցութային հանձնաժողովի անդամների համատեղ ներկա լինելու՝ հեռակա կարգով քվեարկության (այդ թվում՝ առցանց քվեարկության) միջոցով: Հեռակա կարգով քվեարկություն կարող է անցկացվել փաստաթղթերը փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային կապի՝ փոխանցվող և ընդունվող հաղորդագրությունների իսկությունը հավաստող և հասցեատիրոջ կողմից դրանք ստանալու փաստի հաստատման հնարավորություն սովոր միջոցներով փոխանակելու եղանակով:
15. Մրցութային հանձնաժողովի նիստերը հրավիրում և վարում է Մրցութային հանձնաժողովի նախագահը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ Մրցութային հանձնաժողովի տարիքով ավագ անդամը:
16. Մրցութային հանձնաժողովի անդամները գործում են հասարակական հիմունքներով:
17. Մրցութային հանձնաժողովը, ձևավորվելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, Հանրային հեռարձակողի խորհրդի և հանրային հեռարձակողի պաշտոնական կայքէջերում հայտարարություն է տարածում Հանրային հեռարձակողի գործադիր տնօրենի թափուր տեղի համալրման համար մրցույթի անցկացման վերաբերյալ:
18. Հայտարարության մեջ նշվում են՝
  - 1) թափուր պաշտոնի թեկնածուին ներկայացվող պահանջները.
  - 2) մրցույթին մասնակցելու համար ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, դրանք ներկայացնելու վայրը, ժամկետը, մրցույթի անցկացման օրը և ժամը:

19. Մրցույթն անցկացվում է նաև այն դեպքում, երբ դրան մասնակցելու համար դիմել է մեկ մասնակից:
20. Եթե մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել, կամ մրցույթի արդյունքով ոչ ոք հաղթող չի ճանաչվել, ապա մրցույթը համարվում է չկայացած, և անցկացվում է նոր մրցույթ:
21. Նոր մրցույթն անցկացվում է ընդհանուր հիմունքներով՝ սույն կարգով սահմանված ժամկետներում և պայմաններով: Նոր մրցույթի անցկացման մասին հայտարարությունը Մրցութային հանձնաժողովը տալիս է 5 օրվա ընթացքում: Մրցույթը կրկին չկայացած համարվելու դեպքում 10 օրվա ընթացքում Հանրային հեռարձակողի խորհուրդը ձևավորում է նոր Մրցութային հանձնաժողով:
22. Փաստաթղթերը ներկայացվում են Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ մրցույթի անցկացման մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող 10 օրվա ընթացքում: Նշված ժամկետից հետո ներկայացված փաստաթղթերը Մրցութային հանձնաժողովը չի քննարկում:
23. Մրցութային հանձնաժողովը Մրցույթի մասնակիցների փաստաթղթերն ուսումնասիրում է և Մրցույթի հաղթողին որոշում է փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետի ավարտից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում: Անհրաժեշտության դեպքում Մրցութային հանձնաժողովը կարող է իր որոշմամբ երկարացնել այդ ժամկետը ևս 10 աշխատանքային օրով: Ժամկետի երկարացման համար հիմք հանդիսացած հանգամանք(ներ)ը չվերանալու դեպքում Մրցութային հանձնաժողովը կարող է իր որոշմամբ յուրաքանչյուր անգամ երկարացնել արդեն երկարացված ժամկետը ևս 10 աշխատանքային օրով:
24. Մրցույթն անց է կացվում երկու փուլով: Առաջին փուլում Մրցութային հանձնաժողովը քվեարկությամբ որոշում է Մրցույթի այն մասնակիցներին, որոնք անցնում են մրցույթի երկրորդ փուլ: Մրցույթի առաջին փուլում Մրցութային հանձնաժողովի անդամները քվեարկում են «կողմ» կամ «դեմ» յուրաքանչյուր մասնակցի համար: Մրցույթի երկրորդ փուլ են անցնում այն մասնակիցները, որոնց համար «կողմ» են քվեարկել Մրցութային հանձնաժողովի՝ նիստին ներկա անդամների կեսից ավելին: Մրցույթի երկրորդ փուլ անցկացվելու դեպքում Մրցութային հաղթող ճանաչելու նպատակով Մրցութային հանձնաժողովի անդամները քվեարկում են Մրցույթի երկրորդ փուլ անցած մասնակիցներից միայն մեկի օգտին կամ ձեռնպահ են մնում քվեարկելուց: Մրցույթի երկրորդ փուլում Մրցութային հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Մրցույթի երկրորդ փուլում քվեարկության ժամանակ մեկից ավել թեկնածուների օգտին քվեարկած քվեաթերթիկը համարվում է անվավեր, իսկ քվեարկությունն առանց քվեաթերթիկների անցկացվելու դեպքում՝ մեկից ավել թեկնածուների օգտին տրված ձայնը չի հաշվվում:
25. Նախքան քվեարկությունը Մրցույթի երկրորդ փուլ անցած մասնակիցները հրավիրվում են հարցազրույցի:

- 26.Մրցութային հանձնաժողովի նախագահի հրավերով նիստերին կարող են մասնակցել հեռարձակման ոլորտի մասնագետներ:
- 27.Մրցութային հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է Մրցութային հանձնաժողովի անդամների կեսից ավելին:
- 28.Մրցութային հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող Մրցութային հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:
- 29.Մրցութային հանձնաժողովի որոշմամբ մրցութային հանձնաժողովի որոշումներն ընդունվում են բաց կամ փակ քվեարկությամբ, ինչպես նաև դռնփակ կամ դռնբաց պայմաններում:
30. Քվեարկությունը կարող է անցկացվել նաև քվեաթերթիկների միջոցով:
31. Մրցութային հաղթող է ճանաչվում առավելագույն ձայներ ստացած մրցութային մասնակիցը, բացառությամբ երբ առավելագույն ձայնը 2-ից փոքր է: Եթե առավելագույն ձայնը 2-ից փոքր է, ապա մրցութային համարվում է չկայացած և անց է կացվում նոր մրցութային: Ձայների հավասարության դեպքում Մրցութային հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է, եթե վերջինս նույնպես քվեարկել է առավելագույն հավասար ձայներ ստացած մրցութային մասնակիցներից մեկի օգտին, բացառությամբ եթե առավելագույն ձայները 2-ից փոքր են: Եթե Մրցութային հանձնաժողովի նախագահը չի քվեարկել առավելագույն հավասար ձայներ ստացած մրցութային մասնակիցներից մեկի օգտին, ապա Մրցութային հանձնաժողովի նախագահն իրավունք ունի նորից բաց կարգով քվեարկել առավելագույն հավասար ձայներ ստացած մրցութային մասնակիցներից մեկի օգտին, որն էլ կճանաչվի Մրցութային հաղթող: Իսկ եթե Մրցութային հանձնաժողովի նախագահը հրաժարվի նորից քվեարկել, ապա մրցութային կհամարվի չկայացած:
- 32.Մրցութային արդյունքներով Մրցութային հանձնաժողովն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.
  - 1) մրցութային չկայացած համարելու և նոր մրցութային անցկացնելու մասին.
  - 2) մրցութային հաղթող ճանաչելու մասին:
- 33.Մրցութային հանձնաժողովը մրցութային հաղթող է ճանաչում մեկ մասնակցի:
- 34.Մրցութային հանձնաժողովի կողմից մրցութային հաղթող ճանաչվելու մասին որոշումն ընդունվելուց հետո՝ եռօրյա ժամկետում, Մրցութային հանձնաժողովի նախագահը այդ որոշումը ներկայացնում է Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահին: Մրցութային հաղթող ճանաչելու մասին որոշումը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահը գումարում է Հանրային հեռարձակողի խորհրդի նիստ՝ մրցութային հաղթողին Հանրային հեռարձակողի գործադիր տնօրեն նշանակելու համար: Խորհրդի կողմից մրցութային հաղթողին Հանրային հեռարձակողի գործադիր տնօրեն չնշանակվելու դեպքում անց է կացվում նոր մրցութային սույն կարգով սահմանված պայմաններին համապատասխան: